ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին

ԵԴ2/1966/02/24 ք. Երևան
14 մայիսի 2024թ.

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (դատավոր Գոհար Գրիգորյան), ծանոթանալով Երևանի քաղաքապետարանի անունից ներկայացված միջնորդությանը՝ գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

Առաջին հերթին, հարկ է արձանագրել, որ սույն թվականի ապրիլի 25-ին պատասխանողի անունից ներկայացվել է միջնորդություն թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-24/1 գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին, որին ի պատասխան դատավորի աշխատակազմը տեղեկացրել է, որ այն չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին, ուստի չի քննարկվում:
Նույնաբովանդակ միջնորդություն Էլեկտրոնային Համակարգի միջոցով ներկայացվել է 08.05.2024թ., որը Դատավորին Համակարգի միջոցով հասանելի է դարձել 13.05.2024թ. (տեխնիկական որոշակի խոտաններով պայմանավորված): Մասնավորապես, պատասխանողի ներկայացուցիչը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածը, հայտնել է, որ թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-24/1 ընթացակարգի գնման առարկա է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների 2024 թվականի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերումը, և բացահայտելով «երեխայի լավագույն շահ» եզրույթի՝ նշել է, որ առկա պայմաններում մանկահասակ երեխաների սնվելու իրավունքը գերակա է հայցվոր ընկերության առևտրային շահի նկատմամբ և որ տնտեսական գործունեություն իրականացնելու շրջանակներում մասնավոր իրավունքի պաշտպանությունը չի կարող

այնպիսի բացասական հետևանք առաջացնել, որը կհանգեցնի առավել արժեքավոր շահի ոտնահարմանը կամ հանրային իրավունքի դաշտում շահառու հանդիսացող մանկահասակ երեխաների առողջության խաթարմանը: Նշված իրավահարաբերությունների համատեքստում էական դերակատարում ունի համայնքի ղեկավարի՝ օրենքից բխող պարտականությունների կատարումը, ուստի սույն միջնորդությունը բխում է ինչպես երեխաների իրավունքների պաշտպանությունից, այնպես էլ կրթության, մշակույթի և երիտասարդության ոլորտում Երևանի քաղաքապետի կողմից ստանձնած պարտականությունների կատարման ապահովումից:

Ներկայացված միջնորդության վերաբերյալ հայցվորի ներկայացուցիչը Համակարգի միջոցով ներկայացրել է առարկություն՝ հայտնելով, որ «միջնորդության մեջ չկա գեթ մեկ հիմնավորում, թե սույն գործով ինչպես է խաթարվում «երեխայի լավագույն շահ» և/կամ սույն գործի շրջանակում առկա է գնման գործընթացը շարունակելու անհրաժեշտություն հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, (...) գնման գործնթացի կասեցումը օրենսդիրը ինքնանպատակ չի սահմանել, հակառակ պարագայում պատասխանողը կարող է շարունակաբար ընդունել այլ որոշումներ և արձանագրություններ կայացնել, որոնք կարող են խախտել հայցվորի իրավունքները, (...) հայցվորը իր խախտված իրավունքների վերականգման նպատակով 2024 թվականի հունվարի 12-ից դիմել է դատական պաշտպանության՝ քաղաքացիական գործ ԵԴ2/0205/02/24 (ներկայումս վերքննիչ քաղաքացիական դատարանում բողոքարկման փուլում է), նշված գործով պատասխանողը ևս ներկայացրել է նույնաբովանդակ միջնորդություն, որը ժատարանի 14.02.2024թ. կայացված որոշմաբ մերժել է պտասխանողի միջնորդությունը:»:

Քննարկելով ներկայացված միջնորդությունը և դրա դեմ ներկայացված առարկությունները՝ Դատարանն արձանագրում է հետևյալը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:

Վերը նշված նորմում առկա «հանրային շահ» եզրույթը Դատարանի գնահատմամբ հարկ է բացահայտել ՀՀ Սահմանադրության՝ որպես բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող

ակտի տեսանկյունից: Այսպես, ցանկացած իրավական ակտի գործողության ընթացքում առանձին իրավական եզրույթների բովանդակությունը բացահայտելիս առաջին հերթին պետք է առաջնորդվել սահմանադրակաիրավական նորմերով, քանի որ Դատարանի համոզմամբ հենց սահմանադրական կարգի հիմունքները, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները այն հիմնական, ելակետային կանխադրույթներն են, որոնք կարող են ուղենիշային լինել առանձին նորմերի և դրանց եզրույթների (սույն դեպքում «հանրային շահ» եզրույթի) բովանդակության բացահայտման տեսանկյունից: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան: Նշված նորմը ամրագրված է ՀՀ Սահմանդրության երկրորդ գլխում և Դատարանը գտնում է, որ պետության և հանրային շահի բացահայտման տեսանկյունից այն ունի էական նշանակություն: Այլ կերպ ասած՝ թեև հանրային շահի շրջանակը սպառիչ սահմանված չէ որևէ փաստաթղթում, սակայն Դատարանի գնահատմամբ երեխաների առանձին իրավունքների հետ կապված հիմնախնդիրները վերջինիս դասական օրինակն են: Հետևաբար, քննարկվող հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման, դրանց միջև համաչափության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված Դատարանի համոզմամբ ներկայացված միջնորդությունը հիմնավորված է և ենթակա է բավարարման. թեև սույն դեպքում քննարկվող հարցը անուղղակիորեն է շոշափում երեխաների իրավունքները, սակայն Դատարանը գտնում է, որ նույնիսկ այդ դեպքում վերջիններիս շահերի պաշտպանությունը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանա:
Ի լրումն վերոշարադրյալի՝ Դատարանը հավելում է, որ քաղաքացիական գործերի քննության ժամկետների (օրինակ՝ եթե դատական ակտը բողոքարկվի) հաշվառմամբ սույն գործով առավել ընդգծվում է երեխաների շահերի պահպանման անհրաժեշտությունը:
Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը եզրահանգում է, որ միջնորդությունը հիմնավորված է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 234.11, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը՝ թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-24/1 գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին, բավարարել:
1.1. Վերացնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 11.04.2024թ. որոշման հիման կիրառված թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-24/1 գնման գործընթացի կասեցումը:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Digitally signed by GRIGORYAN GOHAR 7611950401 Date: 2024.05.14 17:55:21 AMT **Գոհար Գրիգորյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am